ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1958 Общественные науки

Ռ. Բադրամյան

ԿՌՉԵՆԻ ԲԱՐԲԱՌԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Բարբառների համեմատական քննության շնորհիվ հայտնաբերվել են մի շարք միջբարբառներ ու միջճյուղային բարբառներ, որոնք լեզվաբանության համար կարևոր արժեք են ներկայացնում։

Բարբառների ու հնդեվրոպական մի քանի լեզուների բաղաձայնական համակարգի, նրանց ձևաբանության համեմատական—համադրական քննության, ձայնավորների ներդաշնակության օրենքի բացահայտման շնորհիվ ավելի են ճշտվել մեր հայացքները բարբառների առաջացման, նրանց ձևափոխման ու ճյուղավորման, օտար լեզուներից կրած ազդեցության և այլ հարցերում։

Մեր որոշ բարբառներում ձայնավորների քմայնացման երևույթը, որ խորթ է գրաբարին, միջին հայերենին ու աշխարհաբարին, ինչպես նաև բարբառներից շատերին, լեզվի ազավազման կամ թուրքերենի ազդեցության հետևանք էր համարվում։ Սակայն առանձին բարբառների քննության շնորհիվ գտնվեց «Աճառյանի օրենքը», որով հայագիտությունը ճշտելու է սխալ մեկնաբանված բազմաթիվ հարցեր։

Աճառյանի օրենքի համաձայն Վանի բարբառում ձայնեղ պայթական բաղաձայնների խլացումը պայմանավորված է ա ձայնավորի քմայնացման հետ։ Այս երևույթը պայմանականորեն ընդունված նախավիճակի համեմատությամբ ներկայացնում է մեր հնագույն բարբառներից մեկի՝ Վանի բարբառի հնչյունափոխության երրորդ շրջանը։ Հայտնի, ավելի ճիշտ ուսումնասիրված բարբառներից և ոչ մեկը չի ներկայացնում հիշյալ երևույթի անցման շրջանը. մի շրջան, որից անպայմանորեն անցել է ոչ միայն Վանի բարբառը, այլև Ղարաբաղի, Ուրմիայի և մի քանի այլ բարբառներ ու ենթաբարբառներ։ Անցման այդ վիճակի կամ ձայնավորների քմայնացման պայմաններում ձայնեղ պայթական բաղաձայններն անփոփոխ պահելու շրջանը ներկայացնում է Կռզենի բարբառը։

Հայտնի է, որ «ում» ճյուղի բարբառներում դ ա լ-լ ա լ-տ ա լ միավանկ բայերի ներկան կազմում է իա վերջացող դերբայով և օժանդակ բայի համապատասխան ձևերով։ Դերբայի կազմությունն այդ եղանակն օգտագործվում է նաև բազմավանկ բայերի համար, բայց միանգամայն այլ իմաստով։ Հիշյալ երեք բայերի անկատար դերբայների կազմությունը բարբառների այդ խմբի համար զարտուղություն է, ուստի նրանց ճյուղային պատկանելության համար արժեք չունի։

Ներկայի կազմության այդ ձևն ավելի սովորական է արևելյան մի շարք բարբառներում։ Այս խմբի որոշ բարբառներ -իս (-էլիս,—ալիս) ձևը, պահպանում են անվթար, օրինակ՝ Արդվինի, Պաքավաբերդի բարբառները, որոշ բարբառներ էլ կրճատելով ա-ն, օգտագործում են-ի-ով (էլի,—ալի) ձևը, օրինակ՝ Մարաղայի, Խոյի բարբառները, ուրիշներն էլ կրճատման մեջ ավելի

առաջ անցնելով ստեղծել են-ևս-աս վերջացող (-էլիս-ևս,-ալիս-աս) դերբայը, այդպես են Մեղրու, Ուրմիայի բարբառները։

Դերբայի կրճատված ձևերը արևելյան բարբառների հիշյալ երկու խմբերում էլ օգտագործվել են ներկայի սովորական կազմության համար.

Մարաղա-ի ուզելիս եմ>ուզելիս իմ>ուզելի իմ>ուզելիմ, Մեղրի—ի, սիրելիս եմ>սրելիս իմ>սրելիս իմ>սրևս իմ։

Շրջման ժամանակ, այսինքն՝ երբ բայից առաջ ընկնում է որևէ շեշտված բառ և օժանդակ բայն անցնում է դերբայից առաջ, հիշյալ բարբառների մեծ մասն օգտագործում է —ի-ով (-լի) վերջացող դերբայը, օրինակ, Մարաղայի, Արդվինի, Ուրմիայի, Սոյի և այլն, մի քանիսն էլ -իս (-լիս) լրիվ ձևը օրինակ՝ Շաղախի. իսկ մյուսներն էլ օգտագործում են ս-ով (-ևս,-աս) վերջացող դերբայը, այդպես են Մեղրու, Հադրութի, Կարճևանի և այլ բարբառներ։ Այս բոլորից երևում է, որ հիշյալ բարբառները նախավիճակում ունեցել են —լիս ձևը, որը նրանց զարգացման ընթացքում ենթարկվելով զանազան փոփոխությունների, բարբառների նոր ճյուղերի առաջացման համար ճանապարհ է բացել։

Ելնելով ներկայի կազմության սովորական ձևերից, պրոֆ. Աճառյանն այդ բարբառները կոչեց «էլ» ճյուղի։ Այդ ճյուղի բարբառների տերիտորիայում հայտնաբերելով մի շարք նոր բարբառներ, պրոֆ. Ղարիբյանը համեմատական ուսումնասիրության շնորհիվ գտավ «Ս» ճյուղը, որով արևելյան բարբառները բաժանվեցին «Լ» և «Ս» ճյուղերի։

Համադրելով այդ բարբառների ներկայի կազմության սովորական ձևերը, ստացվում է հետևյալ պատկերը։

Առաջին կամ անկատար դերբայը-լիս մասնիկով կազմող խումբ.

Արդվին	Ղարադաղ	Կաքավաբերդ
գիրէլիս իմ	գ'իրիլիս իմ	գիրիլիս իմ
կարթլիս իմ	մնալիս իմ	մնալիս իմ

Դզմար	Քեյվան—Շաղախ
գիրիլիս իմ	կիրիլիս իմ
մնալիս իմ	մնալիս իմ

Երկրորդ կամ անկատար դերբայը ս մասնիկով կազմող խումբ.

Մեղրի	Հադրութ	Ուրմիա	Կարճևան
գ'իրիս իմ	կ'իրէս իմ	կ'իրէս եմ	գ'իրիլ իմ
մնաս իմ	մրնաս իմ	կ'սոթաս եմ	մնաց իմ

Երրորդ կամ անկատար դերբայը լի>լ մասնիկով կազմող խումբ.

Մարաղա	Խոյ
ուզէլ իմ	սրրել եմ
տօղալ իմ	կարթալ եմ

Ինչպես երևում է, «Ս» ճյուղի բարբառները ներկայի կազմության համար վերցրել են անկատար դերբայի-էլիս>ևս բուն կամ օգտագործել են

անորոշ դերբայի լ վերջավորությունը ս-ով փոխարինելու եղանակը, իսկ «Լ» ճյուղի բարբառները ներկայի բունը կազմելու համար նույնպես վերցրել են անորոշի բունը և պահել են անփոփոխ[1]:

Սակայն հիշյալ բարբառների մեջ չկա մեկը, ավելի ճիշտ հայտնի չէ այն բարբառը, որը պահպանված լինի ներկայի կազմության նախավիճակի և հետագա զարգացման պրոցեսի լրիվ պատկերը. այդ տեսակետից նույնպես ուշագրավ է Կաղենի բարբառը, որը, ինչպես կտեսնենք ստորև, պահպանել է մայր բարբառի ու նրա դուստր «Լ» և «Ս» ճյուղերի բաժանման վիճակը, թերևս այն պատճառով, որ բարբառների ճյուղավորման շրջանում նա կտրըվել է քույր բարբառների միջավայրից և կղզիացել իր նոր հայրենիքում:

Կաղենի բարբառը հայագիտությանն անհայտ բարբառներից է: Այդ բարբառով խոսում են Ադրբեջանական ՍՍՌ Թովուզի շրջանի Կաղեն գյուղում, որ գտնվում է Կուր գետի ափին:

Հայերն այժմ համատարածապես խոսում են Կաղենի բարբառով, Շամշադինի շրջանի խոսվածքով և ադրբեջաներեն. ինչպես երևում է, ադրբեջաներեն խոսքը շատ ավելի ակտիվ է:

Հին սերնդի ներկայացուցիչները՝ Սհար Թարխանյանը (97 տարեկան, ապրում է Նորաշենում), կաղենցիներ Մակիչ Ղազարյանը (82 տ.), Մակիչ Հովհաննիսյանը (82 տ.), Մուխի Մարգարյանը (67 տ.) և մի քանի ուրիշները՝ նոր սերնդից, մաքուր բարբառով են խոսում:

§ 1. Կաղենի բարբառն ունի ինը ձայնավոր. ա, ա̈, ե, ը, ի, ու, ու̈, օ, օ̈. ա, ե, ը, ի, ու, օ ձայնավորները հայերենի սովորական հնչումն ունեն, իսկ ա̈, ու̈, օ̈ հնչվում են ինչպես Ղարաբաղի բարբառում:

Երկբարբառներ չկան:

Գրաբարի բաղաձայններից բացի, բարբառն ունի նաև փ՛, կ՛, ք՛ և լ՛ հնչյունները: Ֆ չկա:

Փ՛, կ՛, ք՛ բաղաձայնները, ինչպես նաև լ՛ բաղաձայնը, հնչվում են ինչպես Ագուլիսի բարբառում:

§ 2. Ա, ու, օ ձայնավորները միավանկ բառերում սովորաբար մնում են անհնչյունափոխ.

ա>ա—ակ>ագգ, ահ, աղ, աղբ, ախտ<ադտ, աչկ<աչք, աջ, արջ, արտ, թագ, թանգ, թամք<թամբ(ք), թան, թառ, մարդ.

ու>ու—տուն, նուռր<նուռն, թութ, թուխս.

ո(օ)>ո—թօռ<թոռն, փօղ<փող և այլն:

Այդպես և երկվանկ բառերում.

ադամ, աթար, ածիկ, աղաք<աղագ, աղալ, աղուն, ախտօտ<ադտոտ, աման, ամառ>ամառն, ամէն, ամիս, ամօթ, պառավ, հանէր<աներ, արրա<ապրայ, թարախ, լալա, աղդա<ադայ, միժնակ<միջնակ.

ունօմ<ունեմ, ապրուստ, յէրկու<երկու, էրեսուն<երեսուն.

—պօպօկ «ընկույզ», անհօա<անհաս, անփօրց<անփորձ, գ՛իրօղ<գրող, աղօտկ<աղօթք<աղաւթք:

Երեք և ավելի վանկանի բառերում, գտնվելով շեշտից առաջ, իսկ շեշտը վերջընթեր վանկի վրա է լինում, ա, ու, օ, ինչպես նաև մյուս ձայնավորները երբեմն դառնում են ը կամ սղվում են.

հըմաչկոտ<ամանչկոտ, բըռանչէլ<բառաչել, լըսաբաց<լուսաբաց,

[1] Հմմ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, երկրորդ մաս, էջ 358:

խընձըմահօտ\/խանձր(մ)ահոտ, բըսպարէլ<ապսպրել, թըլանալ<թուլանալ, պըլօկէլ<պոլոկել և այլն:

Դրական—կրոնական և օտար փոխառություններում ձայնավորները սովորաբար մնում են անհնչյունափոխ.—ասլական<ազգական, աշակէրդ<աշակերտ, արքայութուն<արքայութիւն, դէկտէմբէր, լէպիսկոպոս, օխտանասուն<եօթանասուն, թաքաւէր<թագաւոր, թանգագ՚ին<թանկագին, իմաստուն.

—թափանակ «թրթուր, թիթեռ» ադրբ. kənənək, ,մասալա, «հեքիաթ, առակ.» ադրբ· мəсəлə, համաշա «միշտ, անդադար»— ադրբ. həмишə և և այլն:

Հիշյալ օրենքներն ունեն օրինաչափ բացառություններ. այսպես, երբ բարդության բաղադրամասերը գիտակցվում են, հնչյունափոխություն չի կատարվում.

—աղբափէտ<աղբափայտ, հացիյան<հացհան «ակիշ», գըլխացավ<գլխացաւ, աղբրակինիկ<եղբայրակին (իկ) և այլն:

Որպես կանոն ա, ու օ ձայնավորները ձայնեղ պայթական բաղաձայններից մոտ դառնում են քմային.

ա>ա բահ, բամբակ, բան, բաց, բարակ, բարի, բարց<բարձ, բարձրը <բարձր, դաղձ, դառնալ, դարդակը<դատարկ. ու>ու—բուն<բուն<բոյն, բուրթ <բուրդ, դու, դուր, ջուր. ո>օ—բօխկ, ջօրի:

Ա, օ, ու քմայինների ազդեցությամբ է, որ գ-ն դառնում է գʼ, կ-կʼ, ք>քʼ, լ>լʼ.

ա > ա—գʼանգʼատ, գʼաչ, գʼառը, գʼառնարած, գʼավաթ, գʼարունք, ընգʼլած. ալʼիր>ալիւր, լʼաց, լʼափել, ալʼանի.

ու>ու—գʼութան, գʼունդ, հըրկʼու<հըրկու<երեկոյ, թաքʼուն, լʼու.

ո>օ—գʼոք<գող, գʼօմօշ<գոմոշ<գոմէշ, գʼօրտնուք<գորտնուկ:

Ձայնավորների քմայնացման հիշյալ օրենքը ուսումնասիրված բարբառներից և ոչ մեկը չունի: Ագուլիսի, Մեղրու, Թբիլիսիի բարբառներում, որոնք անվթար պահպանել են գրաբարի եռաստիճան բաղաձայնների համակարգը, ա, օ, ու ձայնավորների քմայնացման համար որոշակի կանոն չունեն:

Վանի և Ղարաբաղի բարբառներում այդ ձայնավորների քմայնացումը համընթաց է ձայնեղ պայթական բաղաձայնների խլացմանը, որի համար ունենք «Աճառյանի օրենքը»:

Ձայնավորների այդպիսի փոփոխությունը, ըստ ակադեմիկոս Հ. Աճառյանի, անցել է երեք ժամանակաշրջան.

Ա շրջան

բա	գա	դա	ձա	ջա
պա	կա	տա	ծա	ճա

Բ շրջան

բա	գʼա	դա	ձա	ջա
պա	կա	տա	կա	ճա

Գ շրջան

պա	/կʼա	տա̈	ծա	ճա
պա	կա	տա	ծա	ճա

Մեր կարծիքով Ե շրջանն է ներկայացնում Ղարաբաղի բարբառը.

պէ կ՚է տէ ծէ ճէ

պա կա տա ծա ճա

Ա շրջանը գրաբարի վիճակն է, իսկ Գ շրջանը՝ Վանի բարբառի։ Անհայտ էր Բ շրջանը ներկայացնող բարբառը, որ և, հանձին Կողբնի բարբառի, գտնվեց։

Որ իսկապես Վանի բարբառն անցել է Բ վիճակից, Հ. Աճառյանը ցույց տալիս փաստերով.

բատ, բագա, բախտ, պամբակ, պանչար, բաշ, բարդի, դադել, կ՚անդատ, գանգ՚ակ, խոնչան[1]։

Կողբնի բարբառը, ընդհանրապես, Բ շրջանն է ներկայացնում և որոշ հետքեր էլ պահպանում է Ա շրջանից.

—բախտ<բախտ, բախշել<բախշել, դադ<գագ, դող<դող, գ՚ըլլոք «գուլպայք», դամղի «դափի», դըրա «դեպի», դառը<դառն, հարուռ<ափ + բուռ, «թաթ, կուցց», հըմբարել<համբարել>համարել, ջահ<ջահ, ջախ<ջախ, ջաղաց, հէգուց, գուր։

Ինչպես երևում է, ա, օ, ու ձայնավորների քմայնացման օրենքը շատ ուժեղ է եղել։ Դրան որպես ապացույց ունենք համարյա բոլոր գա, գու, գո և ծա, ծու, ծո խմբակցությունների գա, գու, գօ և ծա, ծու, ծօ փոփոխությունները.

—գանգ, գատիկ, գարդ, գարդարանք, գօդել, գօղ<գոխ, լըգու<լեզու, գըգ՚ող<գգող.

—էժուն, դըժար || դիժար<դժուար, բըժուժ<բոժոժ, հուժար<յօժար։

Ա, ու, օ ձայնավորներն ունեն նաև մասնավոր փոփոխություններ.

Ա-ն դառնում է ա բառասկզբում, իբրև հենարան ավելացած h-ի պատճառով.

—հանգ՚ի<ադի, հանէղ<աղեղ, հանիծ<անիծ, հարինել<արբենալ

Բացառաբար ունենք նաև անէծք, աւեղ, առաջ՚ավ, արև, որ կարելի է բացատրել թերևս ձայնավորների նմանողության օրենքով։

Ա<է. էծէլի<ածելի։ Ա>ը—ըռանց<առանց, ընգ՚անէլ<անկանել։

Մյուս ձայնավորները էական փոփոխության չեն ենթարկվում։

§ 3. Ինչպես ասվեց վերը, Կողբնի բարբառը երկբարբառներ չունի. գրաբարյան բառապաշարի մեջ նկատելի են երկբարբառների հետևյալ համապատասխանությունները.

Այ>է. փէտ, հէր, մէր, էտ<այդ, էլ, էն, էծ, էս, էրէլ, լէն.

Այ∨ը. ընդէ<այնտեղ, ըստէ<այստեղ, ըսէկ<այսօր։ Այ>իէ. հէգուց։ >ի. գ՚իլ։ >ըէ<այն հէնց, սըհէ, տըհէ։

Աւ>ավ. ավաղակ, գ՚ավաթ, թաքավէր, ակռավ<ագռաւ։ Աւ>օվ. գ՚իրօվ<գրաւ, խօսկ<խօսք։ Աւ>ե. եիլ<աւել, եիլնանալ<աւելանալ։

Ե>յէ. յէգ, յէթէ, յէփցի<եփեցի, յէս, յէրգ, յէրկու, յերէք, յէրգ՚ինք։ Ե>է. էրէսուն, էրէս։ Ե>իէ. հէփ || հէր<երբ, հէփէլ, հէրթ>երդ, հէրէկ, հէրինջ, հէրկէն, հէռնակ<երանեակ։ Ե>ի. լիլլ՚ընէլ<ելանել «հեծնել»։ Ե>օ. օրդում։

Եւ>էվ. թէվ, թըթէվ<թեթև։ Եւ>օվ. դօվ, անձրօվ։

Եա>է. լէրդ, ցէրէն։

Եօ>օ, օվ. օխտը, օխտանասուն, բարօվ։

---

1 Տե՛ս «Բնություն Վանի բարբառի», էջ 21։

Իւ>ի. ա՛րիո, լէրին<արիւն: Իւ>յե լէղ: Իւ>ու—ութուն<—ութիւն:
Ոյ>ու. րուխ, բուն: Ոյ>ի. լիս, թիլ.

Ուա>վա. ասված, գ'ըրվածք, թըլված, թըխված, լըվացք. Ուոա>ա. գիժար || գըժա՛ր:

§ 4. Կողենի բարբառի բաղաձայնական համակարգը գրաբարի և Մեղրու, Ագուլիսի ու Թբիլիսիի բարբառների բաղաձայնական համակարգից էական տարբերություն չունի: Միակ տարբերությունը, գրաբարի համեմատությամբ, այն է, որ այստեղ կան գ', կ', ք', և ղ' հնչյուններ:

Գ—ի փոխարեն գ' ունենք ա, օ, ու, ե, ի ձայնավորներից առաջ: Ա, ö, ու ձայնավորներից առաջ գ>գ' փոփոխության համար օրինակներ բերվեց վերը. այստեղ հիշենք ե-ից, ի-ից առաջ եղած օրինակները.

Գ'էրան, գ'էրմակ, գ'էրէզման, գ'էտ, հրնգ'էր.

—Գ'ին, գ'ինի, գ'ինձ, գ'իր, գ'իրէլ, լէոգ'ինք, լէրգ'իր:

Բացառաբար գ' ունենք նաև ը-ից առաջ, ինչպես, գ'ըլոք «գուլպայք», գ'ըղէլ, գ'րղöլ<գղալ:

Մյուս դեպքերում գ-ն մնում է անփոփոխ.

—Թանգ, թանգագ'ին, գանգ, արմունգ, ընգնէլ, անգօճ<ականջ և այլն, որոնց մեջ գ-ն պահվել է ն-ի պատճառով:

—Գօռալ, գօռգօռալ, գըգիր, գըլխէլ, գըլօխ, հէգալ:

Նույնպես են և կ' ու ք' հնչյունները:

Գ', կ', ք' հնչյունները Կողենի բարբառում ստացվել են գ, կ, ք բաղաձայնների օրինաչափ փոփոխությամբ և ոչ մի կապ չունեն թուրքերենի հետ:

Այդ երևում է ոչ միայն վերը ասվածներից, այլև հետևյալից.

ա) Հայերենի որոշ բարբառներում գի-կապակցությունը դառնում է ջի, գի>ջի. ջինի<գ'ինի<գինի. ջէլ<գ'էլ<գայլ, Ջէղամ<Գ'էղամ<Գեղամ:

Այս նշանակում է, որ գ>ջ փոփոխությունը անցել է երեք շրջան.

ա շրջան—գի, քի.

բ շրջան—գ'ի, ք'ի.

գ շրջան—ջի, չի (քուր>ք'իր>չիր):

Սրանից հետևում է, որ հայերեն բարբառների մի մասը, հանձին գա>գ'ա, գա>գ'ու, գօ>գ'օ, գի>գ'ի, գե>գ' է փոփոխության, ներկայացնում է միջին շրջանը, իսկ մյուս մասը, հանձին ջի, չի փոփոխության՝ պրոցեսի ավարտը:

բ) Բ, դ, ձ, ջ բաղաձայնները փոփոխվելիս օրինաչափ կերպով դառնում են պ, տ, ծ, ճ կամ բ', դ' ձ', ջ' կամ էլ փ, թ, ց, չ. որ նույնպես վկայում է, թե գ>գ', կ>կ', ք>ք' փոփոխությունը հայերեն է:

Լ' հնչյունը հանդիպում է ա, ու ձայնավորներից առաջ, այսինքն՝ համարյա բոլոր լա, լու դառնում են լ'ա, լ'ու, օրինակ՝ լ'ավ, լ'ու:

Այսպիսով, եթե հաշվի չառնենք աֆրիկատների փոփոխությունը (պարզացումը), առնմանություն ու տարնմանություն, անկման, դրափոխություն և նման մասնակի փոփոխությունները, ապա կարող ենք ասել, որ Կողենի բարբառում բաղաձայնները հնչյունափոխություն չեն ենթարկվում:

§ 5. Գոյականների հոգնակին կազմվում է եր, (ա)նի, (ն)իք, տինք մասնիկներով.

Էր ստանում են միավանկ բառերը. փէտ<փայտ, հղն, փէտէր, հաց—հացէր, շէրթ «շոր, հագուստ»—շէրթէր, շուն—շնէր:

(Ա)Ցի ստանում են բաղաձայնով վերջացող բազմավանկ բառերը. բուս — բուսանի, տախտակ — տախտականի, մընող — մընողանի։

Իք ստանում են մի քանի բառեր, ինչ. աման — ամանիք, կընիկ — կընանիք։

ՏիՑք ստանում են նույնպես սակավաթիվ բառեր, ինչ, աղբէր — աղբէրտինք, հընգ՚էր — հընգ՚երտիք։

§ 6. Գոյականների մեծագույն մասը ենթարկվում է ի հոլովման.

Եզակի

Ուղղ, հյց.—	փէտ	ծառը	տախտակ
Սեռ.—	փէտի	ծառի	տախտակի
Տր.—	փէտին	ծառին	տախտակին
Բաց.-	փէտէն	ծառէն	տախտակէն
Գործ.—	փէտով	ծառովը	տախտակով
Ներգ.—	փէտըմ	ծառըմը	տախտակըմ

Հոգնակի

Ուղղ. հյց.-	փէտեր	ծառէրը	տախտականի
Սեռ.—	փէտերի	ծառէրի	տախտականիյի
Տր.—	փէտերին	ծառէրին	տախտականիյին
Բաց.-	փէտէրէն	ծառէրէն	տախտականիյէն
Գործ.—	փատէրով	ծառէրովը	տախտականիյով
Ներգ.—	փէտէրըմ	ծառէրըմը	տախտականիյըմ

Անկանոն կերպով հոլովվող բառերի թիվը հասցված է նվազագույնի. այստեղ էլ բառերի մի մասի եզակին պատկանում է ի հոլովման, իսկ հոգնակին հիշեցնում է ավելի շատ գրաբար.

մարդ

Ուղղ.—	մարդ	մարդընինք
Սեռ.—	մարդի	մարդնընքոց
Տր. հյց.—	մարդին	»
Բաց.—	մարդէ(ն)	մարդնընքոցէն
Գործ.—	(մարդով)	

Հընգ՚էր<ընկեր

Ուղղ.—	հնըգ՚էր	հընգ՚էրտինք
Սեռ.—	հընգ՚էրի	հընգ՚օրտանց
Տր. հյց.—	հընգ՚էրին	» »
Բաց.—	հընգ՚էրէն	հընգ՚օրտանցէն
Գործ.—	(հընգ՚էրով)	—

կըճիկ<կիճ(իկ)

Ուղղ.—	կընիկ	կընանըք
Սեռ.—	կան	կընանոց
Տր. հյց—	կանը	»
Բաց.—	կանէն	կընանոցէն
Գործ.	(կանով)	—

Անկանոն են հոլովվում նաև տըղա, սեռ.—տըղի, հգն. տըղէք, սեռ. տըղօնց, քիր<քոյր<քոյր, սեռ. քըվոր, ախճիկ<աղջիկ, սեռ. ախճըկա. ադ-բէր<եղբայր. սեռ. աղբոր, հգն. աղբէրտինք, սեռ. աղբօրտանց։

Ինչպես երևում է, հոլովման սիստեմով այս բարբառը ընդհուպ մոտե-ցել է պարզության ու կատարելության։

§ 7. Գողենի բարբառի քանակական թվականներն են. մին, երկու ‖ ըր-կու, յիրէք, չօք, հինգ, վէց, օխտը, ութ, ինըը, տասը տասնըմին, տասնըյէրկու, տասնըյիրէք, տասնըչօք, տասնինըը, քսան, յէսէսուն ‖ էրսուն, քառասուն, հիծծուն, վածծուն, օխտանասուն ‖ օխանասուն, ութասուն, իննասուն, հարիր ‖ հարուր ‖ հարուր, հազար ‖ հազար։

Դասական թվականները կազմվում են օրք<որդ, Լրորդ մասնիկներով, որ, ինչպես երևում է դ<ր հնչյունափոխությունից էլ, գրական նորագույն փոփոխություն է։ Առաջին լինում է ծըրքի կամ առաջին, յէրգրօրթ, յէր(ր)-օրթ, չօքէրօրթ, օխայէրօրթ։

Բաշխականները կազմվում են քանակականների պարզ կրկնությամբ։

§ 8. Ածականի համեմատության աստիճանը կազմվում է համեմատելի բառի բացառական հոլովով. «Սա նըրանա լավն ի», «էտ հնըչկէն (բոլորից) սէվ ի», իսկ գերադրականը կազմվում է լափ, մըռռի և նման բառ-մաս-նիկներով։

§ 9. Դերանունները հոլովվում են սովորական ձևով.

Ուղղ.—	յէս	դու	մէնք	դուք
Սեռ.—	իմ	քու	մէր	ձէր
Տր. հյց.—	ինձ	քէ(զ)	մէզ	ձէզ
Բաց.—	ինձանա	քէզանա	մըզանա	ձէզանա
Գործ.—	ինձանով	քէզանով	մըզանով	ձէզանով
Ներգ.	ինձանըմ	քէզանըմ	մըզանըմ	ձէզանըմ

Ուղղ.—	նա, էն	նըրանք,	նըհանք,
Սեռ.—	նըրա	նըրանց,	նըհանց
Տր. հյց.—	նըրան	»	»
Բաց.—	նըրանա	նըրանցա	նըհանցա
Գործ.—	նըրանով	նըրանցով	նըհանցով
Ներգ.—	նըրանըմ	նըրանցըմ,	նըհանցըմ

Այսպես են հոլովվում նաև էս, սըրանք ‖ սըհանք, էտ, տըրանք ‖ տըրանք դերանունները։ Այդպես և ինքը դերանունը։

Ուղղ.—	ինքը	իրանք ‖ ըրանք
Սեռ.—	ըրա̈	ուրանց, ըրանց
Տր. հյց.—	ըրան	» »
Բաց.—	ըրա̈նա	ուրանցա, ըրանցա
Գործ.—	ըրանով	ուրանցով, ըրանցով
Ներգ.—	ըրանըմ	— —

§ 10. Օժանդակ բայի ձևերն են․

ներկա	անկատար	ապառնի	անց. ապառնի
ըմ-չըմ	ի	գըմ-չըգըմ	գէլի-չըգէլի
ըս-չըս	իր	գըս-չըգըս	գէլիր-չըգէլիր
ի-չի	—	գի-չըգի	գէր-չըգէր
ընք-չընք	ինք	գընք-չըգընք	գէլինք-չըգէլինք
ըք-չըք	իք	գըք-չըգըք	գէլիք-չըգէլիք
ըն-չըն	ին	գըն-չըգըն	գէլին-չըգէլին

«Ս» ճյուղի բարբառների լա, <յէ, էր մասնիկները, որոնցով կազմվում են անկատար ձևերը, բարբառս չունի։

Ապառնիի դ-ն պիտի մասնիկի մաշված ձևն է. այդ ձևերը սերտ կապ ունեն Արցախի մի քանի խոսվածքների ուէմ ‖ դէմ, ուի ‖ դի, ուիր ‖ դիր և այլն ձևերի հետ։

§ 11. Կողբնի բարբառի դերբայները հինգն են.

Անորոշ—տանէլ, կարդալ գօլ<գալ։

Անկատար—ա ձև տանէս, կարդաս, գ'օս։
բ ձև՝ տանէլը, կարդալի, գ'օլի.
ռ ձև՝ (հազվադյուտ)՝ մէռանէլիս, հաքացանէլիս.
ռ ձև՝ տանէլը, կարդալը, գ'օլը.
և ձև՝ տանէլ, կարդէլ, գ'օլ
Ապառնի—ա ձև՝ տանէ, կարդա, գ'օ.
բ ձև՝ տանէլ, կարդալ, գ'օլ.
գ ձև՝ տանէլը, կարդալը, գ'օլը.

Հարակատար—տարած, կարդացած, լէկած։
Ենթակայական—տանող, կարդացող, լէկող։

§ 12. Բայն ունի չորս եղանակ.—սահմանական, հրամայական, ըղձական և հարկադրական։ Սահմանական եղանակն ունի վեց ժամանակ՝ ներկա, անկատար, ապառնի, անցյալի ապառնի, հարակատար և անցյալ կատարյալ։ Ըղձական ու հարկադրական եղանակներն ունեն մի-մի ապառնի. անցյալի ապառնին հին սերունդը չունի, իսկ նոր սերունդը գործ է ածում գրականի ձևերը։

Սահմանական եղանակի ներկան կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով։ Ներկայի կազմության մեջ նկատելի են հետևյալ երանգները.

Առաջին, կամ, ըստ երևույթին հնանադույն, բայց սովորական ձևն է գ'իրէս ըմ, ըս, ի։

Այս ձևը հատուկ է «Ս» ճյուղի բարբառներին և դրանով բարբառս պատկանում է այդ ճյուղին։ Երկրորդ, կամ շրջված ձևն է.

1-ին դեմք— «Մրտիկ ըմ անիլ», «Ցէս քէ(ղ) սար ըմ տանիս»։

2-րդ դեմք—«Դու ինձ բան ըս ասէլիս», «ինչ ըս մընալիս»

3-րդ դեմք—«ջուր ի տալիս», «սաս ի դ'օլիս», «ձէքին ի դընէլիս»։

Որպես կանոն առաջին ձևը գործածվում է բոլոր այն դեպքերում, երբ տրամաբանական շեշտն ընկնում է դերբայի վրա և օժանդակ բայը սովորական շարադասությամբ լինում է դերբայից հետո, ինչպես. ջուրը կապում է —ջուրը կապէս ի. գալիս եմ տուն—դ'օս ըմ տուն։

Հակառակ պարագայում, այսինքն՝ երբ օժանդակ բայն ընկնում է դերբայից առաջ, գործ է ածվում երկրորդ կամ«Ւ» ճյուղի բարբառներին էլ հատուկ ձևը.

ջուր է կապում—ջուր ի կապէլիս։

Ներկայի կազմությանն հիշյալ ձևերով Կողենի բարբառը ներկայացնում է պատմական անցյալի այն շրջանը, որով կապվում են «Ս» և «Ւ» ճյուղերի բարբառները։

Ինչպես նշվեց, անկատարի համար այս բարբառը ունի նաև —ալը,—ելը վերջացող դերբայական ձևեր, օրինակ՝ «Ինչ ըս մընալը»։

Դիտ.—Ինձ հյուրընկալած ընտանքի անդամները «Վէր են կենում գնում» նախադասությունը հավասարապես ասում էին.

Վէր ըն կանալի գընալի, վէր ըն կանալը գընալը.

—» » կանալի գընալը. » » կանալի գընալի։

Այդ տարբերությունը, սակայն առաջին անդամ լսելիս դժվար է նկատել, օրինակ՝

—կախ ըն անելի.—կախ ըն ալի.—կախ ըն ալը.

— » ին » — » ը նալի.— » » նալը.

— » ըն նալի. — կախը նալի — » » անէլը։

— » ըմ ընէլըմ.

Թվում է, թե ը-ով վերջացող անկատար դերբայը ներկայացնում է անորոշ դերբայի ներգոյական հոլովաձևը՝ մ-ի կորուստով. կարդալում>կարդալըմ>կարդալը. գրելում>գ'իրէլըմ>գ'իրէլը, ինչպես ունենք —ալիս—յելիս ձևերից ս-ի կորստով առաջացած—ալի, -ելի ձևերը։

Եթե այդպես է, ապա Կողենի բարբառը այս դեպքում համընթաց է Արեշի բարբառին (գ'իրելըմ ըս), որի —ելըմ —ալըմ ձևերը անորոշ դերբայի ներգոյականն են, ուստի գ'իելըմ (Արեշ) ձևը գրելում նախաձևից գրում հետնաձևին անցնելու շրջանն է ներկայացնում։

Սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակը կազմվում է գրաբարի ձևով. գրել—գ'ըրէլի, գ'ըրէլիր, գ'ըրէր, գ'ըրէլինք։

Սահմանական եղանակի ապառնին կազմվում է երկու ձևով.

ա) անորոշ դերբայով և օժանդակ բայով.

ճընանչէլ, մընալ, ըմ, ըս, ի.

բ) բայահիմքով և օժանդակ բայի ապառնու ձևերով.

լէս քէզ գ'իր գըմ տա. մէնք ձէզ գ'իր գընք տա || տանք։

Անցյալի ապառնին կազմվում է ապառնու երկրորդ ձևի անալոգիայով.

գընա(լ) գէլի, գէլիր, գէր։

Վաղակատար ժամանակը հին սերնդի խոսվածքում պակասում է, իսկ

նոր սերունդը այն կազմում է գրականի ձևով. տուն էլի յէրթէլ. քաղէլ էլի. կարդացէլ էլի։

Հարակատար ժամանակը, որ գործ է ածվում նաև որպես վաղակատար, կազմվում է հարակատար դերբայով և օժ. բայի ձևերով.

լիյլած «հեծած» ըմ, ըս, ի, ընք, իք, ըն։

Անցյալ կատարյալ ժամանակի կազմությունը սովորական է.

գնացի, գնացիր, գնաց. մօտացա, մօտացար մօտացավ. նըստէցի, նըստէցիր, նըստէր. տըսա, տըսար, տըսավ. յէկի, յէկիր, ըրէկ ‖ իրէկ։

Այդպես և հրամայական եղանակը տու (ր)—տուվէք.

Ըղձական եղանակի ապառնին կազմվում է հայերենի սովորական եղանակով. տանէմ, տանէս, տանի. գընամ, գընամ, գընա։

Ծանոթ.—Ըղձականի անցյալ ապառնին սովորական չէ. սահմանականի անցյալ անկատարը հավասարապես գործ է ածվում նաև ըղձականի անցյալ ապառնիի համար։

Պայմանական եղանակի ժամանակները արտահայտվում են սահմանականի ապառնիով,

գիդէլ ըմ «կիմանամ». գընալ ըս «կգնաս», «գիտնի յընք վեր նօլ—գիտնի ենք վերցնելու». քուն ըս տանի «կքնես», լաւ ըս պահէ «լավ կպահես»։

Ծանոթ.—Հազվագյուտ են ծերերի մոտ և նոր են ի եղանակիչով կազմված ձևերը՝ կըսըմ, կըսը ‖ կըսէ, կիլի—«կլինի»։

Հարկադրական եղանակի ապառնին կազմվում է բիդի ‖ դը եղանակիչով և ըղձականի ապառնի ձևերով. գընա բըդընք. բիդի ասըք։

Նոր սերնդի խոսվածքում բիդի ‖ բըդը եղանակիչը հաճախ փոխարինվում է ադրբ. kərək բառ մասնիկով։ Թե՛ հին և թե՛ նոր սերունդների խոսվածքում ավելի հաճախական է նույն եղանակիչի կրճատված դ ձևի գործածությունը։ Այս դեպքում սահմանականի ապառնին ու անց. ապառնին հավասարապես գործածվում են որպես հարկադրական։

Խոնարհման մասին ամբողջական պատկերացում կարելի է կազմել հետևյալից։

Սահմանական եղանակ

Ներկա

1-ին ձև —	քաղէս,	գըտանէս,	կարդաս,	գ'օս ըմ, ըս, ի ‖ ը, ընք, ըք, ըհ
2-րդ ձև —	յէս ըմ	քաղէլի,	գըտանէլի,	կարդալի, գ'օլի
	դու (վ)ըս	»	»	»	»
	նա յի ‖ ը	»	»	»	»
	մենք ընք	»	»	»	»
	դուք ըք	»	»	»	»
	նըհանք ըն	»	»	»	»

Անցյալի անկատար

քաղէյի, գըտանէյի, կարդէյի, գ'օյի
քաղէյիր, գըտանէյիր, կարդէյիր գ'օյիր
քաղէյինք, գըտանէյինք, կարդէյինք, գ'օյինք և այլն։

Ապառնի

1-ին ձև — քաղէլ, գըտանէլ, կարդալ, գ՛օլ ըմ, ըս, ի. ընք, ըք, ըն։
2-րդ ձև — քաղէ, գըտանի, կարդա, գ՛օ գըմ, գըս, գի. գընք, գրք, գրն։

Անցյալի ապառնի

քաղէ (լ), կըտանէ (լ) գ՛օ(լ) դէլի, դէլիր, դէր. դէլինք, դէլիք, դէլին։

Հարակատար

քաղած, կըտած, կարդացած, լէկած ըմ, ըս, ի ‖ ը, ինք, ըք ըն։

Անցյալ կատարյալ

քաղէցի,	գըտա,	կարդացի,	լէկի
քաղէցիր,	գըտար,	կարդացիր,	լէկիր
քաղէց,	գըտավ,	կարդաց,	ըրէկ ‖ լէկավ
քաղէցինք,	գըտանք	կարդացինք,	լէկինք
քաղէցիք,	գըտաք	կարդացիք,	լէկիք
քաղէցին,	գըտան,	կարդացին,	լէկին

Հրամայական եղանակ

քա՛դի	կըտի՛	կա՛րդա	լէ(կ)
քաղէ՛ցէք	կըտէ՛ք	կարդա՛ցէք	լէ՛կէք

Ըղձական եղանակ

քաղէմ	գըտանէմ	կարդամ	գ՛օմ
քաղէս	գըտանէս	կարդաս	գ՛ օ՞ս
քաղի	գըտանի	կարդա	գ՛ օ՞
քաղէնք	գըտանէնք	կարդանք	գ՛օնք
քաղէք	գըտանէք	կարդաք	գ՛ օ՞ք
քաղէն	գըտանէն	կարդան	գ՛օն

Հարկադրական եղանակ (երկրորդական ձև)

քաղէ, կրտանի, կարդա, գ՛օ բըդըմ, բըդըս, բրդի, բըդընք, բըդըք, բըդըն։

Ժխտական խոնարհում

Ներկա — քաղէս չըմ, չըս, չի, չընք, չըք, չըն.
քաղէլի ‖ քաղէլը չըմ, չըս, չի, չընք, չըք, չըն.
Անկատար — քաղէլի վէչ, քաղէլիր վէչ, քաղէր վէչ և այլն.
Ապառնի — քաղէ չըդըմ, չըդըս, չրդի...
Անց. ապառնի — քաղէ (լ) չըդէլի, չըդէլիր, չըդէր...
Հարակատար — քաղած չըմ, չրս, չի...
Անց. կատարյալ — քաղնցի վէչ, քաղէցիր վէչ, քաղէց վէչ։
Հրամայական եղանակ — քաղի մի՛ — քաղէք վէ՛չ ‖ քաղէ մէք։
Ըղձական » — քաղէմ վէչ, քաղէս վէչ, քաղի վէչ։
Հարկադրական » — քաղէ չըբդէմ, չըբդէս, չըբդի։